


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քուրթիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութեան համար տրեւել. ողջ դճ. 80

» » վեցամսեայ » 50

Օտար երկիրներ տարեկան ծրագր 25

» » վեցամսեայ » 14

Թղթատարի ծախսը խաբարու
քեան վրայ է :

Խաբարութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՀԱՄԱՋԱՐԱԿ

Գործեր կամ ժանտախտ չի կարծէք : Ա-
նոնք բան մը չեն բաղդատում մը այն հալա-
ծանքին որ համաճարակի մը պէս փոխան-
ցուեցաւ Տաճկաստանէն Պարսկաստան , Պու-
կարիայէն Ռումանիա :

Վառնայի մէջ և Պուկարիոյ ուրիշ կող-
մերը հայերուն դէմ ձեռք առնուած խիստ
միջոցները ծանօթ էին արդէն . կարգը Պու-
րէշինն է հիմակ և Ռումանիոյ ուրիշ քաղաք-
ներունը : Պոլսոյ վերջին Սուրհանդակի թեր-
թերը բերին մեզ կարգ մը ցաւառիթ տեղե-
կութիւններ Ռումանիոյ զանազան կողմերը
ցրուած պանդուխտ ու գաղթական ազգա-
յնոց նկատմամբ ձեռք առնուած անօրինակ
զգուշութիւններուն վրայ : Ի սկզբան, կարծե-
ցինք թէ թուրք մամուլը՝ որուն արձագանգ
դառնալու հարկին մէջ կը գտնուին միւսները,
չափազանցած ու խեղաթիւրած է իրերը :
Դժբաղդաբար եւրոպական Սուրհանդակը փա-
րատեց ամեն կասկած ու վարանում : Կարող
թագաւորին կառավարութիւնը, ի նշան իր բա-
րեկամութեան առ թուրքիա , առիթը յար-
մար նկատել է ռումանական հողին վրայ ա-
պաստանած հայերը տարտնջելու համար : Ա-
ւասիկ թէ ինչ կը կարգանք Պուրէշի կէս-
պաշտօնական թերթին՝ Տրէքթիլի մէջ(1) .

« Գանի մը օր առաջ, ժընէվէն խրկուած
ստուար ծրար մը կը հասնէր Պուրէշ Շարաք
Մարկիէր(2) անուն հայ ուսանողի մը հասցէին :
Այս վերջինը Կալաձ ուղեւորած ըլլալով —
Դանուբի վրայ ռումանական մեծ նաւահան-
գիստը — ծրարը հասցէին տիրոջ մտերիմ մէկ
բարեկամին յանձնուեցաւ , Վարկիան (Վար-
դան) անուն ուրիշ հայ մը որ իսկոյն Կալաձ
ղրկեց զայն : Ըստ որում թղթատարական ու
հեռագրական վարչութիւնը մէկ տարիէ հետեւ
իր պաշտօնէից ուղադրութիւնն հրաւիրած էր
Ռումանիա բնակող հայերու հասցէին օտար
երկիրներէ հասած հեռագիրներու, նամակնե-
րու , ծրարներու և ուրիշ առարկաներու վրայ,
Կալաձի նամակատան պաշտօնեաները կաս-
կածեցան այս տարօրինակ ծրարին վրայ և

(1) Սոյն տեղեկութիւններն արտաստակեց նաեւ
Գաշիքի Փրանսերէն գլխաւոր թերթը՝ Բոսկիւր իր
երկուշաբթի թիւով :

(2) Սահակ Մարգար պիտի ըլլայ, ինչպէս կե-
րեւի Պոլսոյ թերթերէն :

որոշեցին պարունակութիւնը ստուգել ոստի-
կանապետին և ընդհանուր դատախազին ներ-
կայութեամբ : Մեծ եղաւ իրենց զարմանքը,
տեսնելով որ ծրարը տետրակներ կը պարու-
նակէր ի մասին հայկական շարժման ընդդէմ
թուրք կառավարութեան և մասնաւորապէս
ընդդէմ Սուլթան Ապտ-իւլ-Համիտի :

« Ռումանական իշխանութիւնը որոնց միտ-
քէն չէր անցներ որ իրենց երկիրը բնակող
հայեր կրնային դաւադրել դրացի և բարե-
կամ պետութեան մը ապահովութեան դէմ,
որոշեցին ամենախիստ միջոցներ ձեռք առ-
նել : Կալաձի ոստիկանութիւնը իսկոյն ձեռ-
բակալեց Մարգարը, մինչ միւսնոյն ժամանակ
Պուրէշի մէջ կը բռնուէր Վարդան : Միան-
գամայն հրամայուեցաւ խուզարկութիւններ
կատարել Կալաձ և Պուրէշ բնակող այն ա-
մեն հայերուն տունները որոնց վրայ կ'ուսկած
կար թէ վերել յիշուած երկու անձերուն հետ
յարաբերութեան մէջ են :

« Այս խուզարկութիւններ երեւան բերին
թուրքիոյ դէմ մեծ դաւադրութիւն մը : Ռու-
մանական այս երկու քաղաքներու մէջ կազ-
մուած բազմաթիւ գաղտնի գօմիթէներ ա-
նընդհատ հաղորդակցութեան մէջ էին ժը-
նէվի, Լոնտոնի, Բարիզի և Կ. Պոլսոյ գօմի-
թէներուն հետ : Ռումանական ոստիկանու-
թիւնը խիստ ծածուկ կերպով գործած ըլ-
լալով, Պուրէշի լրագիրներուն անկարելի ե-
ղաւ գիտնալ ձեռքաւարած բոլոր հայերուն
անունները : Սա միայն յայտնի է որ, դա-
ւադրութեան լուրն իմացուելուն պէս , հեռա-
գրուեցաւ ժընէվի ոստիկանութեան ինչպէս
նաեւ Կ. Պոլսոյ ռումանական դեսպանատան :

« Ռումանիոյ նախարարաց խորհուրդը յատ-
կապէս ի նիստ գումարուելով, որոշեց ար-
տաքսել այն բոլոր հայերը որոնք կանգամակ-
ցէին այդ գաղտնի գօմիթէներուն :

« Այս գործին հետեւանալով, ռումանական
կառավարութիւնը արտասովոր կերպով խիստ
միջոցներ ձեռք պիտի առնէ Ռումանիա բնա-
կող բոլոր հայերուն նկատմամբ և թէ՛ թուր-
քիայէն ու թէ՛ եւրոպական երկիրներէ ռու-
մանական հողը եկող հայերու մուտքը գրեթէ
բոլորովին պիտի արգիլուի » :

Էնտէքսանսանս Ռումէն ինչպէս նաեւ
Պուրէշի ուրիշ քանի մը թերթեր ալ այս մտօք
հրատարակութիւններ կ'ընեն ու յայտարարու-
թիւններ կը հրատարակեն , որոնք այլեւս տա-
րակոյս չեն թողուր թէ՛ չափազանցութեան

բաժինն ի բաց թողլով հանգերձ՝ իրողութիւնը
ճիշդ է : Այս տխուր պարագային մէջ, մեզի
ուրիշ բան ընել չի մնար , բայց եթէ մաղթել՝
իբրեւ ազգային միակ թերթը փոքրիկ այլ
կարեւոր հայ գաղթականութիւն մը պարու-
նակող ազատ ու հիւրընկալ երկրի մը՝ որ հա-
լածանքի « համաճարակէն » զերծ մնան գոնէ
ուրիշ երկիրներու հայերն , որ և է առիթ
չի տալով հալածանքի և իրենք իսկ ձեռք
առնելով կանխազգուշական կամ « հականերա-
կան » միջոցներ որպէս զի պատուհասը չի հաս-
նի : Թողունք պուկար իշխանապետութիւնն
ու ռուման կառավարութիւնն , Յունաստանի
մայրաքաղաքէն իսկ արտաքսուեցան վերջերս
երկու հայեր որոնք ընկերակցական գոյն ու-
նեցող ֆրանսերէն թերթ մը կը հրատարակէին :
Ո՛ր կերթայ ասոր վերջը :

Գրիստափոր Գրիստափոր դարը անցած է
և գոնէ մինչեւ այն օրը ուր վստահ ըլլանք թէ
նոր աշխարհի մը — հայերու յատուկ մտատիպար
աշխարհի մը գիտը պիտի կատարուի — չա-
րաչար չի գործածենք ազատութիւնը որ մեզ
կրնձայուի զանազան տեղեր և յարգը գիտ-
նանք այն ամեն երկիրներուն ուր « կեանքի ,
պատուի և ընչից ապահովութիւն » կը վայելենք,
բան մը զոր ձեռք բերելու համար հարկը
հազար զոհեր տուինք Տաճկաստանի մէջ , ա-
ռանց յաջողելու : Բաւական չեղա՞ւ :

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

2 .

ՎԱՐԺԱՊԵՏԸ

Գրիստափոր աշակերտները՝ Պոլսոյ վարժապետ-
ներէն աւելի ստակ կը շահէին նոյն իսկ այն ատեն .
ներն երբ երեք հատ ձուկ ուտելու համար հինգ
հազար հոգի մէկտեղ սեղան կը նստէին :

Ամսականը չորս հարիւր դրուշ ըլլալուն պէս՝
անոց գործածել կսկսի Պոլսեցի վարժապետը :

Վարժապետներուն համար այն է հոգաբարձուն
ինչ որ է Պիզմարք Ֆրանսայի մը համար, դգալ
մը ջուրի մէջ կը խզէն :

Վարժապետին սփռածն է լոյս , կերածը բոյս,
սիրածը կոյս և դրամադուրիւ լոյս :

Որքան փնտռէ նա խախտյա ,

Բաղդը այնքան կուսայ խոյս :

Իր ամբողջ խոհան է ձեռք մը նոր հագուստ,
մետաքսէ հովանոց մը և արծաթ ժամացոյցին ոսկի
չղթայ մը :

Այս փափագով կը մեռնի :
Վարժապետին էն մեծ արդուզարդն է կօշիկին
նեղիւր :

Կնկան մը հետ խօսած ժամանակին կաս կար-
միր կը կորին :

Վարժապետի հետ թուղթ խաղացած ունիք:
Հինգ հազար բուենով պէջիկի բարքի մը սովորա-
բար 25 վայրկեան կը տեսէ . իսկ վարժապետի հետ
2 ժամ և 34 վայրկեան :

Կիրակի օրերը տնայտնաւ եկեղեցի կերթոյ . . .
Թաղական խորհրդարանէն ներս անարկ մը նստե-
լու համար :

Ալեքսանդր քաղաք մը ունին որ միմիայն ի-
րենց յատուկ է :

Փողկապը շարունակ օձիքէն վեր կը մագլցի :
Պրաններէնի գասեր կուտայ և գաղղիացիի մը
հետ տանկերէն կը խախի :

Իրեն համար Վիթթօր Հիւկօ ոտանաւոր շինող
Աստուած մըն է :

Վարժապետը կառք նստելու համար պէտք է
որ թաղին մէջ հարուստի մը յուղարկաւորութիւնը
տեղի ունենայ :

Հիւսիս չեմ գիտեր , բայց իմ ժամանակս վար-
ժապետ չկար որուն ոտքերը . . . պերճախօսու-
թիւն չունենային :

Պետական ու երոպական վարժարաններու տըխ-
մար տալերտները՝ ազգային վարժարաններու մէջ
վարժապետ կըլլան :

Փրիլիք իրենց աստիարէզին Hôtel Terminus-ն է :
Շատակեր կըլլան , բայց բիշով կապին :

Աշակերտը «միւսիւ» կըսէ իրեն , թաղականը
«պարոն» , տնտեսը «պատուելի» և գործաւորը «էֆէնտի» :

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՎԱՐՇԱՊԵՏԻ ԿԵԱՆՔԷՆ

Թաղական խորհրդարան մը : Կանաչ ասուիին
տուրը երկու-երեք աղաներ : Վարժապետը կոնկու-
լով սենեակէն ներս կը մտնէ , յետամնաց ամսական
ներք պահանջելու համար :

Թաղականը . — Ի՞նչ է ան պարոն Սարգիս :
Վարժապետը . — Այս օրուան համար եկուր ըսի :

Թաղականը . — Ասոր փախ չկայ :
Վարժապետը . — Բայց , էֆէնտի . . . :

Թաղականը . — Զիյա ըսինք ես :
Վարժապետը . — Տան տէրը . . . :

Թաղականը . — Եկող շարքի տուր , էֆէնտիս ,
մտուկը ներք է , չի կրցանք հասկըցնել , բայց որուն
կրտսէ , մեր վարժապետները գլուխ չունին քի . . . :

Վարժապետը . — Ճիշտ ձեր ամիսներուն պէս :
ԹԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒՍՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ նախարարապետին մօտալուտ
հրաժարման լուրը օրուան մը համար աշխար-
հի շրջանն ընելէ ետք , հերքուեցաւ իսկոյն :
Տէյլի Քրօնիքի հրատարակած էր արդարեւ
այս երկուշաբթի , թէ Լորտ Սոլզբերի կը փա-
փագի հանրային կեանքէ քաշուիլ անձնական
տկարութեան պատճառով և հետեւաբար բրի-
տանական դահլիճը նոր կազմութիւն մը պի-
տի ստանայ : Երէկ առաւօտ , Ռիդէրի երկ-
րորդ հեռագիր մը կը ծանուցանէր ամեն
կողմ թէ բացարձակապէս անհիմն է այս լուր :

— Տէյլի թէքէկրաժ կիմանայ թէ Թուրքիոյ
արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշա
պատուիրակ պիտի կարգուի՝ հաշտութեան
վերջնական պայմաններուն վրայ բանակցելու
համար Յունաստանի պատուիրակներուն Մակ-
րօկօրտաթօ իշխանին և Պ. Սթեֆանուի հետ :
Թէվֆիկ փաշայի պիտի աշակցի Աթէնքի օամ .
նախորդ դեսպան Ասլամ պէյ :

Հալասի հեռագիր մը կը հաղորդէ թէ
Թեսալիացիները իրենց տեղերը վերադար-
ձնելու պաշտօն ունեցող յանձնաժողովը Ա-
թէնքէն ճամբայ ելեր է դէպ ի Լամիա՝ Էտ-
հէմ փաշայի հետ բանակցելու համար : Այն
պարագային ուր օամ . իշխանութիւնը շարու-
նակէն ընդդիմանալ այս վերադարձին , հելլէն
կառավարութիւնը Տէրութեանց միջամտութիւ-

նը և միջադրային յանձնաժողովի մը կազմու-
թիւնը պիտի պահանջէ :

— Եթտրայէն հասած նորագոյն լուրերու
նայելով , ալպանիացի ապստամբապետներն
հաւաքուելով այդ քաղաքին մէջ՝ կառավար-
չին միջոցաւ կատարեալ հնազանդութիւն
յայտնելու են Սուլթանին , որմէ ետք իրենց
տեղերը վերադարձեր են : Ալպանիացիներուն
զէնքերը առնելու գործը յառաջիկային թող-
ուեր է սակայն , որպէսզի չըլլայ թէ դժուա-
րութիւններ ծագին :

— Եւրոպական թերթերը Պաղատէն
հեռագիր մը կը հրատարակեն , ծանուցանող
թէ Պատրայի մէջ արաբները ոտքի ելելու են
և թէ Երզնկայէն զօրք զրկուեր է :

— Գերմանական թերթերը Ֆոն տէր Կոլձ
փաշայի ընտրելութիւնը կը պաշտպանեն՝ Կրէ-
տէի կառավարութեան պաշտօնին համար :
Վիէնայի Ռայխալթէնէր լրագիրը որ կէս-պաշ-
տօնական զեկոյցներ կընդունի շատ անգամ ,
կը յայտարարէ թէ այս տեսակ ընտրութիւն
մը ֆրանսացւոց և իտալացւոց դիւրագա-
ծութիւնը պիտի գրգռէր , Անգլիոյ անվստա-
հութիւն պիտի ներշնչէր և Յունաստանը
դժգոհ թողուր :

— Յունաստանի թագաւորին երկրորդ
որդին , Եօրկիտ իշխանը , ամուսն 10ին Աթէնք
գարձել է ութ ամսուան բացակայութենէ մը
ետք որու միջոցին նախ ստանձնեց Կրէտէի
ջուրերը զրկուած թուրքիակիներու հրամա-
նատարութիւնն , յետոյ ծառայեց հելլէն նա-
ւատորմին մէջ : Աթէնքէն ուղղակի թաթարի
գացեր է , իր հօր ամարանոցը ուր զինքը կան-
խեր էին իր երկու եղբայրներ , գահաժա-
ռանգը ու Նիքօլա իշխանը , Լաւրիօմէն ուղղակի
հոն երթալով :

— Եւրաթ օրուան թուով հրատարակե-
ցինք Ռիւթէրի հեռագիր մը որ կըսէր թէ
Սերպիոյ և Պուկարիոյ միջեւ ծագած հակա-
ռակութիւնը՝ Սկիւպի վանքին սեփականու-
թեան առթիւ՝ կացութիւնը կը դժուարացու-
նէ : Այդ վանք կը գտնուի Բօպօճէ գիւղին
բարձրերը , Սկիւպի մօտ Օամ . իշխանութիւնը
վերջերս անկից դուրս հանելով պուկար կրօ-
նաւորները , վանքը յանձնեցին սերպ կրօնա-
ւորներուն : Կ. Պոլսոյ պուկարական գործա-
կատար Պ. Մարքօֆ նախորդ շաբթուն բողո-
քագիր մը տուած էր պալատ , ուղղակի Սուլ-
թանին ուղարկութիւնն հրաւիրելով Սկիւպի
իշխանութեանց ապօրէն ընթացքին վրայ :

Միւս կողմէ , թուրքահելլէն պատերազ-
մի ժամանակ պուկար իշխանապետութեան
խոստացուած պէրաթները տակաւին չեն տըր-
ուեր , թէեւ ամիսներէ հետէ կը սպասուին
վայրկեան առ վայրկեան : Ռուսական դես-
պան Պ. Նէլիտով Պուլէն մեկնելէ առաջ յանձ-
նարարեր է եղեր Դրան որ Վարտար գետին
արեւելեան կողմը գտնուող գաւառներու
մետրապոլիտութեան համար միայն յանձնէ
այդ պէրաթներէն : Հետեւաբար , հաւանական
չէ որ Պուկարաց եկզարքը յաջողի պէրաթ
ստանալ Մանասթըրի և Տէպրէի թեմերուն
համար որոնք աւելի կարեւոր են :

Վերջապէս , Դուռը խնդրեր է Սկիւպի
սերպ եպիսկոպոս Տ. Ֆօրմիլիանոսէ՝ յետաձգել
իր ուղեւորութիւնը մինչեւ որ վճռական որո-
շում մը տրուի պուկարական պէրաթներու

մասին՝ տեղեւոյն պուկարներուն և սերպերուն
միջեւ ընդհարման առիթ չի տալու համար :

— Քեօյնիլէ Զայթունի տեղեկութիւննե-
րուն նայելով , Մակեդոնիոյ հիւպատոսական
վերջին տեղեկագիրները կը հաղորդեն թէ
գաւառին մէջ յայտարարութիւններ կը վըխ-
տան՝ պուկար ժողովուրդը ապստամբութեան
գրգռող :

— Նորագոյն լուրերու նայելով , Կրէտա-
կան խնդիրը առաջնութիւն կը ստանայ ուրիշ
խնդիրներու վրայ : Երէկ առաւօտ , Լոնտոնէն
Ռիւթէրի հեռագիր մը հետեւեալը կը հա-
ղորդէր .

« Սուլթանը տրամադիր չէ իր զօրքերը
էտ կանչել Կրէտէն և կը պնդէ որ կղզիին
կառավարիչը օսմանեան հպատակ ըլլայ : Կը
կարծուի թէ Տէրութիւնը միաձայնութեամբ
պիտի հաւանին կատարեալ ինքնօրինութեան
մը ծրագրին : Հիմակուհիմայ , Կրէտացի իս-
լամներն անկառավարելի կը դառնան : »

* * *

Կրէտէի կառավարչութեան ընտրելիսնե-
րուն մէջ կը յիշուի նաեւ Նուպար փաշայի ա-
նունը :

ՍՊԱՆԻԱ . — Սիամի թագաւորը Մատրիտ այ-
ցելեց ու խնամակալ-թագուհիին կողմէ հիւրընկալ-
ուեցաւ : Սպանիական Թրիքըն շոգենաւր փոթոր-
կի լուրերով ֆուլա կղզիին մօտ՝ ընկղմեցաւ : 120
հօգի խղճուեցան որոնց մէջ կան զօրքեր ու նա-
ւագներ :

ԻՏԱԼԻԱ . — Նախորդ շաբթուն Հռոմի մէջ
եղած ցոյցերը զորս հեռագիրը ծանոց , առաջ ե-
կած էին շաբթուն հարստութեան վրայ դրուած
տուրքերու տեսելուն : Քաղաքին վաճառականները
միմիկ մը գումարելով , կորուշեն պատուիրակու-
թիւն մը զրկել ներքին գործոց նախարարին , իրենց
գանգատներն յայտնելու համար : Հալասն , ժողովուր-
դը պատուիրակութեան միանալով , ցուցարարներու
թիւը կը ստուարանայ , այնպէս որ պաշտօնատանց
դուռները կը գոցուին իրենց դէմ : Մեծ շիթթու-
թիւն կը տիրէ քաղաքին մէջ . վաճառատուները ,
ճաշարանները , խանութները կը փակուին : Ոստի-
կաններուն ու ամբօխին միջեւ ընդհարումներ կը
պատահին ու քանի մը հօգի կը վիրաւորուին : Իրիկ-
ուան կողմ , հանդարտութիւնը կը վերահաստատուի :

Նախարարապետ Պ. տի Ռուտինի , վաճառա-
կաններու պատուիրակութիւնն ընդունելով , յայտա-
րարեր է թէ օրինաց օսմանին մէջ մնալով հան-
դերձ կարելի եղածը պիտի ընէ հաշտ յարաբերու-
թիւններ հաստատելու համար տրոյ հաւաքիչներուն
և հարկատուներուն միջեւ իտալական մամուլը մեծ
կարեւորութիւն չընծայէր այս խոստումին : Միտրե-
րը գրգռուած կը մնան :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ.
վարդապետ Աշոտ՝ ընկերակցութեամբ Աբրա-
համ Բարթող պէյի՝ շաբաթ առաւօտ Բաս-
էլ-Թինի պալատան մէջ ընդունուեցաւ Բարձր-
Խալիֆին կողմէ որուն յանձնեց իր պաշտօնին
վաւերացման եպարքոսական գիրը :

Բարձր Խալիֆը սիրալիւ ընդունելութիւն
մը ըրաւ Եփրատի հայոց հոգեւորականին
Ն. Արժանապատուութիւն տակաւին Աղեք-
սանդրիա կը մնայ :

Կ. Պոլսէն կը գրեն եւրոպական թերթի
մը , հոկտ. 10 թուականով .

« Կայսերական Իրատէ մը վաւերացուց այն

քննիչ Թանձնաժողովին կազմութիւնը որ Ա- նատուր պիտի ղրկուի՝ պաշտօն ունենալով զբաղիլ վերաշինութեամբ եկեղեցիներու, վան- քերու, դպրոցներու և մզկիթներու որոնք կործանուած են իբր երկու տարի առաջուան խռովութեանց միջոցին :

«Սակայն Պատրիարքարանը բնաւ գոհ չէ այս Թանձնաժողովի կազմութենէն որ կը պա- րունակէ հայ լուսաւորչական անդամ մը , հայ կաթողիկ անդամ մը , յոյն մը և չորս թուրք : Պատրիարքարանի ժողովը այն կար- ծիքէն է թէ Թանձնաժողովը որ և է գործ նական արդիւնք ձեռք չի պիտի անցունէ , ուստի մտադիր է պալատէն արտօնու- թիւն խնդրել ընդհանուր հանգանակութիւն մը բանալու համար հայերուն մէջ , ձմրան մի- ջոցին օգնելու համար իրենց հացակարօտ եղ- բայրներուն որոնք կը գտնուին այն գաւառ- ներն ուր տեղի ունեցան ջարդերն ու աւա- րաւորութիւնները »

Երկուշաբթի իրիկուն Գահիրէ հասաւ Տիգրան փաշա որ կիրակի վերադարձած էր Եւրոպայէն : Հայ և օտարազգի բազմաթիւ անձինք կայարանէն դիմաւորեցին Ն. Վսե- մութիւնը :

Կիւսնանք թէ քաղաքի Ընթերցասիրաց ըն- կերութեան Գործադիր Ժողովը խմբովին հրաժարա- կան տուեր է :

Աղեքսանդրիոյ դազթականաց Գանձնաժողովը սնտուկին դատարկութենէն վհատած՝ հրաժարական տուած է Թաղ. խորհրդոյ որ անմիջապէս ընդունած է զայն :

Այսուհետեւ նոյն ինքն Թաղ. խորհուրդը պիտի ստանձնէ այդ տառապեալներու հոգածութիւնը :

Կուզէ՞ք գիտնալ թէ քանի վեղարաւոր կայ այս պահուս Կ. Պոլսոյ մէջ : Տասնընչինգ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս և երեսուն երկու վարդապետ, ընդ աւելն 47 :

Աղեքսանդրիոյ ազգային վարժարանին համար դարբնուած permutation, որ այնքան աշխուշ յա- րոյց, տեղի ունեցեր է վերջապէս : Տնօրէնը՝ Պ. Ասքանաղեան՝ պարզ ուսուցչի վերածուեր է եւ ուսուցիչը՝ Պ. Պէքարեան տնօրէնութեան բարձ- րացեր է :

Այսպէս Վերջին յետինք՝ սուղիներ, և սուղիներ՝ յետինք :

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԼՍԱՐԱՆԸ

Սովորականէն տարբեր ոգեւորութիւն մը կար չաբաթ գիշերուան Լսարանին մէջ, անոր համար որ բազմութեան մէջ նոր դէմքեր կը տեսնուէին, երա- ժշտական մասը ուրիշ տոգոմներէ աւելի ճիշտ էր և ատենաբանին նիւթը այժմէութեան տեսակետով հետաքրքրական :

Տիար Սմբատ Բիւրատ Կիլիկիոյ վրայ խօսեցաւ ճկուն ոճով մը և այնպիսի մանրամասնութիւններով որ հոն ապրող մը միայն պիտի կրնար գիտնալ :

Ունեկողիւնները շատ գոհ մնացին այդ ատենա- խօսութենէն :

Երաժշտասէր երիտասարդներու խումբը, որոնց մէ երեքը եւրոպայի էին յայտադրին ամեն մասերը շատ յաղորդեամբ կատարեցին և ծախահարուե- ցան շարունակ : Մասնաւոր յիշատակութեան արժա- նի է Պ. Բէնտարի որ ծիծաղաշարժ մենախօսու- թիւններով խառն երգեր երգեց և այսպէսով հրա- պոյր մը եւս աւելցուց Ընթերցասիրացի երեկոյթին վրայ :

Շաբաթ գիշերուան երեկոյթէն դատելով, կը տեսնուի որ այդ հրահանգիչ և զօրեցուցիչ հաւա- քումները երթալով աւելի պիտի ճաշակուին հոսա- րակութենէն :

Կիւսնանք թէ յաջորդ լսարանին համար, գոր- ծադիր ժողովը անակնկալներ վերապահած է Ընկե- րութեան անդամներուն ու հրաւիրեալներուն :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր արտասահմանի բաժանորդներուն կը ծանուցանենք թէ մինչեւ յառաջիկայ Դեկ- տեմբեր 1 իրենց բաժանորդագիրը մեզ չի հասցունողներուն այլ ևս թերթ չի պիտի ղըր- կուի :

ՏԵՂԱԿԱՆ

Պաշտօնական յայտարարութենէ մը կե- րելի թէ Բարձր. Խորհիւր ամսոյս 28ին պիտի մեկնի Մոնթազահէն առաւօտեան ժամը 8ին և Նեղոսի արեւմտեան ճիւղին վրայ գտնուող քաղաքները և Մէնուֆիէի գաւառը այցելելէ ետք՝ նոյեմբեր 3ին Գահիրէ պիտի հասնի եւ- րեկոյեան ժամը 4ը 45 անցած և ուղղակի Ապտինի պալատը պիտի երթայ :

— Լորտ Գրոմբր երէկ առաւօտ Աղեքսան- դրիւ գնաց՝ ներկայ գտնուելու համար այն երկու պաշտօնական հացկերոյթներուն զորս Բարձր. Խորհիւր կուտայ ի պատիւ անգլիական նաւատորմին հրամանատար գեր-ծովակալ Հարրիսի :

— Այդ նաւատորմ որ Աղեքսանդրիոյ նա- ւահանգիստը կը գտնուի այս պահուս, կը բաղկանայ հետեւեալ մարտանաւերէն :

Ռեյվենմ, զրահաւոր, որ ունի 14 թնդա- նօթ և 760 նաւաղ :

Գեմբրոսաու, զրահաւոր, 14 թնդանօթ և 525 նաւաղ :

Պարլիթօր, զրահաւոր, 14 թնդանօթ և 612 նաւաղ :

Գանկրիան, յաժաւորակ, 10 թնդանօթ և 317 նաւաղ :

Տրայաւ, թնդանօթակիր, 4 թնդանօթ և 120 նաւաղ :

Գանկրիանը ու Տրայաւը նաւահանգիստ մտած են . իսկ առաջին երեք զրահաւորնե- րը նաւահանգիստէն դուրս կեցած են իրենց արտասովոր տարողութեան պատճառով :

Բարձր. Խորհիւր երէկ առաւօտ ընդունեց գեր-ծովակալ Հարրիսի այցելութիւնը որուն փոխադարձ այցելութեան գնաց քիչ վերջ, Գանկրիան մարտանաւին մէջ :

— Խորհիւրական ընկերութեան Թեյլֆիգ Բապպանի շոգենաւը շաբաթ օրը Աղեքսանդ- րիայէն մեկնեցաւ դէպի Պոլիս, Խորհիւր մայ- րը Եգիպտոս փոխադրելու համար :

— Ելեկտրական թամուէյներու բուրգե- րու ճիւղը յառաջիկայ նոյեմբերին պիտի բաց- ուի :

— Ամսոյս 27ին, Բարձր. Խորհիւր ծնըն- դեան տարեդարձին առթիւ, պաշտօնական ընդունելութիւն պիտի կատարուի Բասէլ- թիւնի պալատին մէջ :

— Լիւսան իւր Արապ տեղական թերթին մէջ կը կարդանք թէ Դուռը Մարիէի պէտ- քերուն համար 50,000 ոսկի պահանջած է Սուրիոյ կուսակալութենէն : Այս գումարը կա- րենալ ղրկելու համար՝ կուսակալը Նազմ փաշա ամբողջ պաշտօնէից ամսականները վար դրած է . . . կտրուկ միջոց մը ձեռք առած ըլլալու համար :

— Էմիլըն Կազեթ կապահովցնէ թէ

Պ. Տուրքինա իր Եգիպտոսի մէջ ունեցած պաշ- տօնէն չպիտի հրաժարի ստանձնելու հա- մար : Պանք Օթոմանի Պոլսոյ տնօրէնութիւնը որ իրեն կառաջարկուէր Սըր Էտկար Վինսթը- դի պաշտօնէ քաշուելուն հետեւանօք :

— Հոկտեմբեր 1էն 7՝ Գահիրէի մէջ պա- տահած են 347 մահ և 421 ծնունդ (205 մահ և 216 աղջիկ) : Իսկ Աղեքսանդրիոյ մէջ՝ 208 մահ և 188 ծնունդ (90 մահ և 98 աղջիկ) :

— Դաւառներէն եկած լուրերուն նայե- լով, այս տարուան բամպակի բերքը սքանչելի է թէ՛ քանակութեան և թէ՛ որակութեան տե- սակէտով : Սակայն երկրագործները կը գան- գատին գիներու անկումէն որ հետեւանք է բերքին առատութեան :

— Նախընթաց առաւօտ Շուպրայի կայա- րանէն արար մը երկաթուղոյ կառախումբին կենալէն առաջ վար իջնել ուղելով, վար ին- կաւ ու անիւներուն տակ ջախջախուեցաւ :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՅԱՐԻԶ, 19 հոկտ. — Խորհրդարանը բացուեցաւ հանդարտ կերպով :

ՊԸԼԿՐԱՏ, 19 հոկտ. — Սերալ նախարարութիւնը հրաժարական տուաւ :

ՅԱԿՈՒ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

Տիար Յ. Ասատուեան, որ վերջերս առ- ժուռեցաւ փաստաբանէջ տեղական եւ խառն դատարաններու առջեւ, իր գրասենեակը հաստատած է ի Գահիրէ Իսմայիլիէի քաղին մէջ, Մագրամ ֆաշայի ապարանքին դիմաց, Սէնդ-ճօրճ պառի վրայ :

Բացի դատական գործերէ, յիշեալ գրա- սենեակին մէջ ժուռներէն, անգլիներէն, ա- րաբներէն, հայերէն եւ թուրքերէն լեզուներով օրինական եւ անեն տեսակ գրութիւն- ներ կը քարգանալին :

Յաճախորդները գոհ պիտի մնան աշ- խատքեան եղանակէն եւ գիւններու ջախա- տրութենէն :

Չրի խորհրդածութիւն՝ վկայեալ աղ- փասներուն համար :

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՆՈՐ ՏԵՍԱԿ ՕԹԷԼ ՄԸ

Նիւ Եօրթ Հեմպթի մէջ կը կարդանք ծանու- ցում մը որով Ճօն Բիթթըր անուն մէկը կը յայտա- րարէ թէ Նիւ-Եօրթի կեդրոնական փողոցներէ մէ- կուն մէջ օթէլ մը հաստատած է՝ մասնաւորապէս անձնասպան ըլլալ ուղղողներու ծառայելու համար :

Այդ օթէլի ամէն մէկ սենեակին մէջ յաճա- խորդները պիտի գտնեն, երկաթէ առկալ օղակ մը . . . ի պէտս ամեն անոնց որոնք կախուիլը . . . ուրիշ ունէ մեռնելու եղանակէ մը լաւագոյն կը հա- մարին :

Արդուզարդի սեղանին վրայ քովէ քով շար- ուած են շատ մը շիշեր որ կը պարունակեն լաւա- գոյն թոյները և գիշերասեղանին վրայ փառաւոր ընկալիչ մը իր վեց կապարները ցոյց կուտայ փորին ծակերէն : Աւելորդ է յայտարարել — կաւելցնէ օ- թէլին տէրը — թէ յաճախորդները պարտին կանխիկ վճարել պանդոկին օրականը :

Այնքան պարագայ տեղը չէ որ գործի մարդիկ կոչուած են :

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԸ ԹԱՐԹԱՓԱՆԲԸ

Անցեալ շաբաթ Պոլսոյի վճռաբեկ ատենանը

ի նիստ գումարում էր դատելու համար տասներեք տարեկան երիտասարդ մը որ սպաննած էր իր հայրն և մայրը :

Փաստարանը շատ աշխատեց է ազատելու համար այդ դեռատի մարդասպանը, բայց ի դուրս, որովհետեւ ոճրագործը զարմանալի պաշարիւնութեամբ մը ամեն բան կը խոստովանէր : Տեսնելով որ ճարձկայ, հետեւեալ կերպով վերջացուցեր է իր պաշտպանողականը, խօսքը երգուեալ դատաւորներուն ուղղելով.

— Այո՛, պարոններ, փոխանորդեայս խեղագրութեան վայրկեանի մը մէջ ինքզինքին տէր չէ կրցած ըլլալ և սպաննած է իր հայրն ու մայրը . բայց մի մոռնա՛ք, պարոններ, թէ ձեր դիմացը որքան մը ունիք որ արժանի է ձեր գթութեան :

Գովացին ճաշարանը .

Սպասաւորը՝ յաճախողին .

— Երկու՞ ֆրանքնոց ճաշ մը կուզէք կամ թէ երեքնոց :

— Տարբերութիւնը ի՞նչ է :

— Ֆրանք մը :

Ա Ձ Դ

Տիկին Էօփեմի Էրզուրումեան որ այժմ Գահիրէ հաստատուած է, պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է դաւանականութեան դասեր տալ մասնաւոր տներու եւ վարժարաններու մէջ:

Դիմել փարոսի խմբագրատունը կամ Տ. Գաբրիէլ Նեանեանի: 3—6

ՐԱՖՖԻԻ ԳՈՐԾԵՐԸ

Դիւրամասշէլի պայմաններով

Ստանձնած ըլլալով Բաֆֆիի երկասիրութեանց տարածումը Եգիպտոսի մէջ, չսպառուած գրքերէն ունի միշտ պատրաստ ծախուելու համար.

Սպառուածներէն՝ հետեւեալ երեք կտորներու տպագրութեանը ձեռնարկուած է Երոսպայի մէջ ամենաշքեղ կերպով:

ՍԱՄՈՒԷԼ. Ա. Բ. Ե. Գ. հասոց

ԴԱԻԻԹ ԲԵԿ. Ա. Բ. Ե. Գ. ՝ վերջաբանով

ԿԱԾԵՐԻ. Բ. հասոցը լիակատար

Իւրաքանչիւր գիրք առանձին կարծէ 5 շիլլինգ 25 դահեկան ողջ: Երեքը միասին 12 շիլլինգ, 60 դահ. ողջ. ըստ տեսնելէ վերջ 1 անգ. ոսկի:

ԲԱՅԱԿԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէեւ ասկէ առաջ որոշեալ ատեն մ'ունէր, (մինչև սեպտ. 1) սակայն և հիմայ որովհետեւ տը պագրութիւնը միայն յունուարի մէջ կուտար, ի դիւրութիւն դեռ եւս չը բաժանորդագրողներու, կը շարունակեմ տարածել բաժանորդաթերթերը հետեւեալ կերպով.

Ինչպէս յիշեցինք, իւրաքանչիւր բաժանորդաթերթ երեք գրքերու համար կարծէ 12 շիլլինգ, 60 դահեկան ողջ:

Այժմ մինչ տպագրութեան լրանալը կայ երեք ամիս, 12 շաբաթ. հոկտ. 1է սկսեալ, որով իւրաքանչիւր բաժանորդագրող անձ կը պարտի վճարել շաբաթը 1 շիլլինգ, 5 դր. ողջ:

Անոնք որ աւելի ուշ կը բաժանորդագրուին, պէտք է վճարեն առաջին առթիւ որոշեալ թուական (հոկտ. 1) է անցած օրերու շաբաթավճարը, դարձեալ օրին վերջացնելու համար իսկ այս պարզապէս դիւրութիւն մ'է որ կընծայեմ միանուագ վճարելու անկարող անձանց համար, որոնք այս կերպով անգագալպէս պիտի ունենան վերոյիշեալ մեծանուն վիպասանին գործերը:

Բաժնի միւս երկերէն ալ շաբաթավճարով կաւրելի է վաճառուիլ փափաքողներուն:

Դիմել ի Գահիրէ

Ընկերութիւնը.— ուղղակի ինձ

Պապ-Էլ-Սալպ.— սեղանաւոր տիար Ս. Միրան. Կանի խանութը:

Օտար երկիրներէն՝ հետեւեալ հասցէին

M. Egavian

3—10

(Poste restante)

Caire

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.— Կանխայճար արժեթուղթերու վրայ.— Կստան. ձեռք յաճախողներուն հաշտոյն համար գանձումներ ընել Եգիպտոսի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ ուարդեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պուրք փողոց Եգիպտական հեռագրատան դէմ Բէսմազօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօլպէքիյէ, հայկական պանդոկին քովընտրի կամարակալ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու եղանակաւ կ'արդուիէ շապիկներ և այլն սովորական գիներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻԲ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԵՔՍԱՆԳՐՈՅ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3/4	Օմնիպ. 1,2,3/4	Կէս ուղ. 1,2,3/4	Օմնիպ. 1,2,3/4	Էքսպրէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3/4	Էքսպրէս 1, 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Գահիրէ	առտ. 4 45	առտ. —	առտ. 7 —	առտ. 8 15	առտ. 9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	ժամ. 8 —	—	ժամ. 7 49	ժամ. 9 32	ժամ. 10 15	երեկ. 4 47	երեկ. 5 29	երեկ. 8 32	երեկ. 12 35
Թանիս	ժամ. 11 28	—	ժամ. 8 30	ժամ. 10 30	ժամ. 10 55	երեկ. 5 45	երեկ. 6 7	երեկ. 9 30	երեկ. 1 44
	մեկ. 11 48	6 —	մեկ. 8 34	մեկ. 11 15	մեկ. 11 —	մեկ. 6 26	մեկ. 6 11	մեկ. —	մեկ. 1 54
Տամանհուր	երեկ. 3 10	երեկ. 7 34	երեկ. 9 41	երեկ. 12 49	երեկ. 11 58	երեկ. 7 59	երեկ. 7 7	երեկ. —	երեկ. 3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	ժամ. 9 15	ժամ. 10 45	ժամ. 2 30	երեկ. 1 —	երեկ. 9 40	երեկ. 8 7	երեկ. —	երեկ. 5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3/4	Կէս ուղ. 1,2,3/4	Օմնիպ. 1,2,3/4	Էքսպրէս 1 2 կգ.	Խառն 1,2,3/4	Օմնիպ. 1,2,3/4	Էքսպրէս 1 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Աղեքսանդրիա	առտ. —	առտ. 7 —	առտ. 7 15	առտ. 9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	—	ժամ. 8 6	ժամ. 8 58	ժամ. 10 2	ժամ. 12 14	երեկ. 4 13	երեկ. 5 15	երեկ. 8 6	երեկ. 1 9
Թանիս	ժամ. —	ժամ. 9 12	ժամ. 10 28	ժամ. 11 —	ժամ. 2 39	երեկ. 5 43	երեկ. 6 10	երեկ. 9 40	երեկ. 2 56
	մեկ. 6 15	մեկ. 9 16	մեկ. 11 20	մեկ. 11 5	մեկ. 2 49	մեկ. 6 30	մեկ. 6 14	մեկ. —	մեկ. 3 6
Պէնհա	մեկ. 7 18	մեկ. 9 59	մեկ. 12 23	մեկ. 11 46	մեկ. 4 43	մեկ. 7 33	մեկ. 6 52	մեկ. —	մեկ. 4 25
Գահիրէ	ժամ. 8 30	ժամ. 10 45	ժամ. 1 35	ժամ. 12 30	ժամ. 6 25	մեկ. 8 45	մեկ. 7 35	մեկ. —	մեկ. 5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	մեկ. 7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	ժամ. 7 48	Կայարան	—	ժամ. 3 30
	մեկ. 12 33	մեկ. 7 53		երեկ. 1 20	մեկ. 7 5
Չակադիկ	ժամ. 1 34	ժամ. 8 54	Զակադիկ	ժամ. 3 7	ժամ. 8 53
	մեկ. 1 44	մեկ. 9 4		մեկ. 3 17	մեկ. 9 3
Խամադիա	մեկ. 3 40	առտ. 1 —	Պէնհա	ժամ. 4 13	ժամ. 9 47
Սիւէզ Կայարան	ժամ. —	մեկ. 5 —		մեկ. 4 17	մեկ. 9 4
Տօք (բարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	ժամ. 10 35

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզնի